

<http://ysu.am/main/>, Երևանի պետական համալսարան, 05.04.2018

<http://ysu.am/news/hy/Training-for-youth-in-foreign-labs>

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ



Հայաստանում գործող «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» (ԵԳԱԾ) նպատակ ունի նպաստել գիտության առաջընթացին, կադրային ներուժի համալրմանը, ինչպես նաև երիտասարդ գիտնականների ստեղծագործական զարգացմանը:

Նշենք, որ ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող ԵԳԱԾ ղեկավար կազմը մարտի 30-ին հանդիպել է ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի հետ, որի ընթացքում ներկայացվել է անցած տարվա գործունեության արդյունքները և նախանշվել առաջիկա նախագծերի հիմնական ուղղությունները: Երիտասարդ գիտնականների ստեղծագործական զարգացմանը նպաստելու նպատակով ստեղծված ծրագիրը հիմնադրվել է 2012 թ.-ին՝ աջակցելով գիտությամբ զբաղվելու ցանկություն ունեցող երիտասարդներին:

Այս տարի իրականացվելիք ծրագրերի մասին զրուցեցինք «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» (ԵԳԱԾ) ղեկավար կազմի անդամ, ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ, նախկին համալսարանական Գևորգ Վարդանյանի հետ:

- Այս տարի «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» երիտասարդ գիտնականների ստեղծագործական զարգացմանը նպաստող ինչ ծրագրեր է իրականացնելու:

- Այս տարի ոչ միայն շարունակվելու են վերոնշյալ ծրագրերը, այլև իրականացվելու են մի շարք այլ ծրագրեր: Նախատեսում ենք երկու խոշոր ծրագրեր: Առաջին ծրագիրն արտասահմանյան գիտական լաբորատորիաներում երիտասարդ գիտնականների վերապատրաստման աշխատանքներին է ուղղված: ԵԳԱԾ-ի

շրջանակում արդեն երկու տարի անընդմեջ անցկացրել ենք հայազգի գիտնականների համահայկական համաժողով, որի ընթացքում արտերկրից Հայաստան ժամանած հայազգի նշանավոր գիտնականների հետ ձեռք են բերվել համագործակցության մի շարք պայմանավորվածություններ. արդյունքում հայազգի գիտնականներն իրենց իսկ գիտական լաբորատորիաներում, գիտահետազոտական ինստիտուտներում պատրաստ են անվճար հիմունքներով ընդունել և աջակցել այն երիտասարդ գիտնականներին, ովքեր ցանկություն կունենան վերապատրաստվելու արտերկրում: Իսկ ԵԳԱԾ-ի շրջանակում կապահովվի հայ երիտասարդ գիտնականների կեցության և ճանապարհի ծախսերը:

Սա յուրօրինակ ծրագիր է, որը լայն հնարավորություն կտա երիտասարդ գիտնականներին կարճաժամկետ՝ մեկից մինչև հինգ ամիս ընկած ժամանակահատվածում, վերապատրաստվելու արտերկրի լաբորատորիաներում: Ծրագրի կարևոր պայմաններից մեկն այն է, որ երիտասարդն արտերկրում վերապատրաստումը ստանալուց հետո պետք է վերադառնա Հայաստան և այստեղ ծավալի իր գիտական գործունեությունը: Այս ծրագիրն անցկացվելու է մրցույթով, որի չափորոշիչները դեռևս մշակվում են:

Երկրորդը միջգիտակարգային գիտական դրամաշնորհային ծրագիրն է, որը դեռևս գտնվում է մշակման փուլում: Մեր հիմնական նպատակն է ձևավորել նոր մշակույթ, որպեսզի խրախուսվի միջգիտակարգային գիտական աշխատանքը: Մենք պետք է աջակցենք, որպեսզի ԵԳԱԾ-ի շրջանակում տարբեր գիտահետազոտական կառույցների կամ տարբեր բուհերի գիտական լաբորատորիաների երիտասարդ գիտնականները համագործակցեն: Ես վստահ եմ, որ այս դրամաշնորհի արդյունքում կձևավորվեն գիտական նոր խմբեր, որոնց աշխատանքները հիմք կդառնան գիտական նոր լաբորատորիաներ ստեղծելու համար: Առաջիկայում կհայտարարենք նաև այս դրամաշնորհի մրցույթի կարգի մասին:

**- Գիտության առաջընթացին նպաստող ի՞նչ ծրագրեր ենք արդեն իրականացրել:**

- Հաշվետու տարում ԵԳԱԾ-ը համագործակցել է տեղի և արտասահմանյան գիտական կազմակերպությունների և պետական կառույցների հետ, որոնց հետ համաֆինանսավորման սկզբունքով իրականացրել են գիտական դրամաշնորհային և մրցույթային ծրագրեր, ինչպես նաև միջազգային գիտական համաժողով: Մասնավորապես՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի հետ իրականացվել է «Արդյունավետ երիտասարդ գիտաշխատող» մրցույթը: Հայ օգնության ֆոնդի գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի հետ գիտական դրամաշնորհների մրցույթ է անցկացվել: Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից իրականացվող դրամաշնորհային մրցույթի ֆինանսավորմամբ իրականացվել է Հայաստանի Առաջին Հանրապետությանը նվիրված Հայազգի գիտնականների երկրորդ համաժողովը: